

## ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՏՈՆԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ 104-ՐԴ ԱՄՅԱԿԸ

07.12.2022 18:02



ՀՀ փաստաբանների պալատն Ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում նշեց փաստաբանի մասնագիտական օրն ու Հայաստանում փաստաբանության ձևավորման 104-րդ ամյակը:

Երեկոյի ընթացքում նախատեսված էր Զանգվածային լրատվության միջոցների պարզևատրում և Փաստաբանական ակադեմիայի շրջանավարտներին՝ փաստաբանական գործունեության արտոնագրերի շնորհում:

Տոնական միջոցառումը սկսվեց Հայաստանի Հանրապետության օրհներգի ներքո:

Ներկաներին ողջունեց և բացման խոսքով հանդես եկավ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Շնորհավորական ուղերձում Փաստաբանների պալատի նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀ բոլոր փաստաբաններին՝ փաստաբանի դժվարին առաքելությունը հանձն առնելու և փաստաբանական համայնքի համբավն ու հեղինակությունը բարձր պահելու համար:

Խոսքն ուղղելով ապագա փաստաբաններին՝ Սիմոն Բաբայանը հորդորեց առաջնորդվել անկախությամբ, պարկեշտությամբ և արդարամտությամբ, ինչպես նաև գերնպատակ համարեց՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Նա շնորհակալություն հայտնեց նաև Փաստաբանական ակադեմիայի ռեկտորին և աշխատակազմին, Փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի անդամներին, Փաստաբանների պալատի խորհրդին, որակավորման հանձնաժողովին, որոնց ջանքերով կազմակերպվել և անց են կացվել ուսումնառության գործընթացը և որակավորման քննությունները:

Ողջույնի խոսքով և շնորհավորական ուղերձներով հանդես եկան նաև Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, Փաստաբանների խորհրդի անդամներ Մարինե Ֆարմանյանը, Կարեն Սարգսյանը և Գայանե Դեմիրջյանը:

Իր ելույթում Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը նշեց, որ փաստաբանի կատարելատիպը կամ փաստաբանի հավաքական

կերպարը՝ խոհեմ, բարեխիղճ, համարձակ, արդար և զսպված մասնագետն է: Հավակնորդներին դիմելով նշեց, որ պետք է հեռու մնալ կոռուպցիայից, քանի որ կոռուպցիան վերացնում է փաստաբանի մասնագիտությունը:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամներն էլ իրենց շնորհավորական խոսքում ընդգծելով օրվա խորհուրդը՝ հույս հայտնեցին, որ փաստաբանական ինստիտուտը կշարունակի զարգանալ և ամուր լինել՝ շնորհիվ պրոֆեսիոնալիզմի և միասնականության:

Այնուհետև ելույթ ունեցան նաև Փաստաբանական ակադեմիայի շրջանավարտներ Ջուլիետա Մանուկյանը և Ավետիք Հարությունյանը:

Հաջորդիվ տեղի ունեցավ զանգվածային լրատվության միջոցների պարզևատրման արարողությունը:

Փաստաբանների պալատի կողմից շնորհակալագրերով պարզևատրվեցին մի շարք լրատվամիջոցներ՝ փաստաբանական ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության, փաստաբանների հետ արդյունավետ աշխատանքի և իրավական ոլորտի խնդիրները պատշաճ լուսաբանելու համար:

Ներկայացնում ենք պարզևատրվածների ցանկը.

1. Հայկական երկրորդ հեռուստաալիք **«Լրաբեր»** լրատվական ծրագիր
2. Կենտրոն Հ/Ը **«Հանցանքի հետքով»** հաղորդաշար
3. Երկիր Մեդիա **Հ/Ը «Երկրի լուրերը»** լրատվական ծրագիր
4. 5-րդ ալիք **«Հայլուր»** լրատվական ծրագիր
5. Հայաստանի Հանրային ռադիո **« Ռադիոլուր»** լրատվական ծրագիր
6. **«Գորիսի Մամուլի ակումբ»** ՀԿ
7. **«Irvaban.net»** կայք
8. **«Armlur.am»** կայք
9. **«Hraparak.am»** կայք
10. **«Hetq.am»** կայք
11. **«Aravot.am»** կայք
12. **«168.am»** կայք

Երեկոն ավարտվեց փաստաբանների հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման արարողությամբ: Փաստաբանական համայնքը համալրվեց 85 նոր անդամներով:















Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })